ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

Մարտ 15, 1955

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N.Y.

Մեծապատիւ
Տիար Տօքթ. ճէյմս կարեան
Ատենապետ Միսկան Խորհուրդի
Հայց. Եկեղեցւոյ Համայնքին
Ռիչմընտ.

Յարգելի Տօքթ. կարեան,

Ստացած ենք տարուս Փետրուար 25 թուակիր Ձեր Միսկան տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ Թեմական Առաջնորդ Գեր. Տ. Մեսրոպ Ս. Արք. Գալֆեանի նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Միսկան Խորհուրդի մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ամբողջական ցանկը նոր կազմին, կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ կը վայելեն ընտրողներու վստահութիւնը իբրեւ համայնքիդ նախանձախնդիրը, անձնուէր եւ պարտաճանաչ անդամները, գրովս կը վաւերացնենք եւ կը հաստատենք անոնց ընտրութիւնը ու պաշտօնները հետեւեալ կերպով.-

Տիարք՝	Տօքթ. ճէյմս կարեան	Ատենապետ
	Զարեհ Աշճեան	Փոխ-Ատենապետ
	Տօքթ. ճօրճ վրանեան	Թղթակից Քարտուղար
	ճան Պարոնեան	Արձանագրող Քարտուղար
	Փիթըր Ս. Կրին	Գանձապահ
	Հարի Տարհանեան	Փոխ-Գանձապահ
	Հարի Տիրատուրեան	Խորհրդական

Կ՝օրհնենք նորակազմ Միսկան Խորհուրդի բոլոր անդամները եւ վստահ ենք թէ անոնք պիտի աշխատին Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Տիրոջ փառքին համար։ Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն. կը ցանկանք որ անոնք բոլորն ուրիշ արդիւնաւոր գործունէութեան շրջան մը։

Մնամք հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար

ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի